ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻԶՄԻ ԾԱԳՈՒՄԸ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Մարտին Մանուկյան

Երևանի «Գլաձոր» համալսարանի իրավագիտության ամբիոնի դասախոս, ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան, իրավաբանական գիտությունների թեկնածու

Համառոտագիր. Հոդվածի արդիականությունը պայմանավորված է ներկայացուցչական ժողովրդավարության պայմաններում կառավարման պառլամենտական ձևի տարածվածությամբ և պետական իշխանության բարձրագույն մարմինների գործունեության կազմակերպման առավել արդյունավետ կառուցակարգերի որոնման անհրաժեշտությամբ: Համադրելով պառլամենտարիզմի ծագման, էության և հասկացության շուրջ քաղաքագիտական և իրավաբանական գրականության մեջ եղած տարբեր տեսություններն ու մեկնաբանությունները, տալով պառլամենտարիզմի սահմանման սեփական բնորոշումը, կարևորելով, որ պառլամենտարիզմի սահմանադրաիրավական հիմքում դրված է իշխանությունը միայն ժողովրդին պատկանելու հիմնարար սկզբունքը՝ հոդվածի հեղինակն իրավացիորեն նկատել է, որ պառլամենտարիզմի ծագման և զարգացման պատմությունը հարթ չի եղել: Թե՛ որպես ուսմունք (դոկտրին), թե՛ որպես ինստիտուտ, այն մեկ ճգնաժամ չէ, որ ապրել է: Նշելով, որ իդեալական չէ նաև դրա ժամանակակից վիճակը նույնիսկ այն երկրներում, որոնք արդարացիորեն իրենց համարում են պառլամենտարիզմի օրրան՝ հոդվածի հեղինակը ժամանակակից պառլամենտարիզմին բնորոշ հատկանիշներն առանձնացնելուց բացի, նաև այն կարևոր հետևությանն է հանգել, որ պառլամենտարիզմի գլխավոր հատկանիշը կառավարության քաղաքականության և պառլամենտի քաղաքական առաջնահերթությունների պարտադիր համաձայնեցումն է, ինչը նշանակում է, որ պառլամենտական կառավարման օրոք բացառվում է պառլամենտի վստահությունից զրկված կառավարության առկայությունը:

Հոդվածում արծարծվող հարցերի համալիր վերլուծությունը կարող է օգտակար լինել Հայաստանի Հանրապետությունում նախապատրաստվող սահմանադրական փոփոխությունների համատեքստում:

Բանալի բառեր՝ պառլամենտ, պառլամենտարիզմ, կառավարություն, օրենքի գերակայություն, ժողովրդի իշխանություն, պետական իշխանության բարձրագույն մարմիններ, պառլամենտական կառավարում, իշխանությունների տարանջատում, սահմանադրական փոփոխություններ:

Պառլամենտարիզմի էությունը հասկանալու համար մասնագետները դրա ուսումնասիրությունն ավանդաբար սկսում են Մեծ Բրիտանիայից, որի խորհրդարանը հաճախ անվանում են խորհրդարանական նախահայր կամ բոլոր խորհրդարանների «մայրը»[1]:

Անգլիական խորհրդարանի (պառլամենտի)[2] ծագման տարեթիվը 1265 թվականն է, որով էլ սկիզբ է դրվել օրինաստեղծ ներկայացուցչական մարմնի գոյությանը:

Ժամանակակից պետությունների գերակշիռ մասի սահմանադրություններով օրինաստեղծ գործունեությունը վերապահվում է ընտրովի ներկայացուցչական մարմիններին, որոնք ունեն տարբեր անվանումներ՝ Դաշնային ժողով (Ռուսաստանի Դաշնությունում և Շվեյցարիայում), Կոնգրես (ԱՄՆ-ում), Ստորտինգ (Նորվեգիայում), Կնեսետ (Իսրայելում), Ալտինդ (Իսլանդիայում), Գլխավոր կորտեսներ (Իսպանիայում), Գլխավոր կոնգրես (Մեքսիկայում), Ժողովրդական ժողով (Եգիպտոսում), Գերագույն խորհուրդ (Ուկրաինայում), Ազգային ժողով (Հայաստանում) և այլն: Եվ քանի որ օրինաստեղծ գործունեությունը ներկայացուցչական մարմինների միակ գործառնությունը չէ, և օրենքներ ընդունելուց զատ նրա իրավասության ոլորտում ներառվում են նաև պետության ներքին և արտաքին քաղաքականության հիմքերի որոշումը, բյուջեի հաստատումը և այլն, ուստի տարանջատված իշխանությունների պայմաններում այն, որպես օրենսդիր իշխանություն իրականացնող մարմին, **«առաջինն է հավասարների մեջ»**:

Սակայն, եթե պառլամենտը՝ որպես պետահրավական ինստիտուտ, բազմադարյա պատմություն ունի[3], ապա պառլամենտարիզմը ծնունդ է առել և զարգացում է ստացել նորագույն շրջանում[4]:

Պառլամենտարիզմի սկզբունքների տեսական իմաստավորումը Եվրոպայում սկսվեց լուսավորության դարաշրջանում: Այսպես, Անգլիայում Ջոն Լոքը իր «Երկու տրակտատ կառավարման մասին» աշխատությունում ընդգծում է. «…ժողովուրդը գտավ, որ իր սեփական անվտանգությունն ապահովված չէ…և որ ինքը չի կարող օգտվել ոչ անվտանգությունից, ոչ հանգստից և ոչ էլ կարող է համարել, թե ապրում է քաղաքացիական հա-

---

[1] Տե՛ս **Graham H.,** The mother of parliaments. London, Methuen & Co., 1910, 181-185 էջեր:

[2] «Պառլամենտ» բառը (անգլերեն՝ «parliament») ունի ֆրանսիական ծագում («parler»՝ խոսել բայից): Դա կապված է այն բանի հետ, որ Անգլիայի Նորմանդական զավթումից հետո (1066թ.) պալատական շրջաններում և ֆեոդալական վերնախավի շրջանում ֆրանսերենը դարձավ տիրապետող լեզու: «Պառլամենտ» բառը կիրառվել է նաև մինչև 1265թ., սակայն ի սկզբանե այն նշանակել է ֆեոդալների ժողով (օրինակ՝ հայտնի է «կատաղի պառլամենտը»՝ բարոնների համագումարը Օքսֆորդում, 1258թ.):

[3] Տե՛ս Сравнительное конституционное право. М., 1998, էջ 505-569:

[4] Տե՛ս Конституционное право зарубежных стран. Учебник для вузов. / под общ. ред. **М. В Баглая.** М., «Норма», 2010, էջ 294-295:

սարակությունում այնքան ժամանակ, քանի դեռ օրենսդրական իշխանությունը չի հանձնվել կոլեկտիվ մարմնի տնօրինությանը՝ անկախ այն բանից, թե ինչպես կկոչվի այն՝ սենատ, խորհրդարան, թե՝ մի այլ կերպ»[5]:

XIX դարի կեսերից սկսած՝ պառլամենտարիզմն իր ամրագրումն է գտել աշխարհի շատ երկրների սահմանադրություններում, որոնցում հենց ժողովուրդն է ճանաչվում որպես իշխանության սկզբնաղբյուր, իսկ պառլամենտարիզմի սահմանադրաիրավական հիմքում դրված է իշխանությունը միայն ժողովրդին պատկանելու մասին հիմնարար սկզբունքը[6]:

Ժողովրդի կողմից անմիջական ժողովրդավարության ճանապարհով իշխանական գործառույթների իրականացման առավել հետևողական կողմնակիցներից մեկը Ժան-Ժակ Ռուսոն էր, որն անմիջական ժողովրդավարությունը դիտարկում էր որպես քաղաքական իդեալ: Նրա կարծիքով՝ օրենսդիր իշխանությունը պետք է պատկանի անմիջականորեն Ազգային ժողովին, մնացած իշխանական մարմիններն աներկբայորեն պետք է ենթարկվեն նրան և պետք է «լինեն ոչ միայն ինքնիշխանի՝ օրենսդրի հլու զենքը, այլև ընտրվեն ինքնիշխան ժողովրդի կողմից, լիակատար պատասխանատվություն կրեն նրա առաջ, ինչպես նաև ցանկացած պահի այդ նույն ժողովրդի կողմից փոխարինվեն ուրիշներով»[7]: Ընդ որում՝ Ժան-Ժակ Ռուսոն հերքում էր իշխանության ներկայացուցչական ձևը՝ պնդելով, որ «ժողովրդին կարող է ներկայացնել միայն հենց ինքը՝ ժողովուրդը»[8]:

Շառլ Մոնտեսքյոն իր ուսումնասիրություններում ընդգծում էր, որ ժողովրդի կողմից իշխանության անմիջական իրականացումը մեծ պետություններում հնարավոր չէ, իսկ փոքր պետություններում այն որոշակի դժվարությունների հետ է կապված, ուստի անհրաժեշտություն է առաջանում ստեղծելու ժողովրդական ներկայացուցչության մարմին: Եվ հենց ընտրվող ներկայացուցիչներն էլ, ըստ նրա, պետք է լավագույն արդյունքով քննարկեն պետության համար առավել նշանակալի հարցերը: Ընդսմին, նա պնդում էր, որ ներկայացուցչական ժողով «պետք է ընտրել ոչ թե նրա համար, որ այն ինչ-ինչ ակտիվ որո-

---

[5] Տե՛ս Парламенты: сравнительное исследование структуры и деятельности представительных учреждений 55 стран мира/ пер. с англ. М., «Прогресс», 1967, էջ 423-432:

[6] Նման նորմեր են պարունակում Ֆրանսիայի 03 հունիսի 1958թ. Սահմանադրությունը, ԳԴՀ 23 մայիսի 1949թ. Հիմնական օրենքը, Իտալիայի 22 դեկտեմբերի 1947թ. Սահմանադրությունը, Իսպանիայի 27 դեկտեմբերի 1978թ. Սահմանադրությունը և այլ ժողովրդավարական պետությունների սահմանադրություններ:

[7] Տե՛ս **Кокошкин Ф.Ф.,** Лекции по общему государственному праву. М., 1912, էջ 232:

[8] Տե՛ս **Руссо Ж.-Ж.**, Трактаты, М., 1969, էջ 222:

շումներ կայացնի, այլ նրա համար, որ օրենքներ ստեղծի կամ հետևի, թե արդյոք լա՞վ են պահպանվում իր կողմից արդեն իսկ ընդունված օրենքները...»[9]: Ըստ Մոնտեսքյուի՝ ժողովրդի օրինաստեղծ գործունեության փոխարեն այդ նույն ժողովրդի ներկայացուցիչների կողմից օրենքների ընդունումն ավելի նախընտրելի է,- քանի որ՝ «ներկայացուցիչները հնարավորություն ունեն համատեղ քննարկելու հարցերը նախքան դրանց լուծելը»[10]:

Ինչպես անմիջական, այնպես էլ ներկայացուցչական ժողովրդավարություններն ունեն մեկ ընդհանուր հիմք՝ **ժողովուրդն իր կամարտահայտությամբ**: Ուստի չի կարելի համաձայնել անգլիացի պետականագետ Ա.Դայսիի հետ, որը ներկայացուցչական ժողովրդավարությունն անջատում է անմիջականից՝ նշելով. «Փոխարինել պառլամենտի իշխանությունը ժողովրդի իշխանությամբ՝ կնշանակի երկրի կառավարումը գիտակցության ձեռքից վերցնելով՝ հանձնել տգիտության ձեռքը»: **Մեր կարծիքով, ճիշտը ժողովրդավարության նշված ձևերի հիմնավորված զուգակցումն է: Ավելին, ըստ մեզ՝ պետությունն օժտված կլինի որպես իրավական պետություն զարգանալու նախադրյալներով միայն այն դեպքում, եթե դրանում անմիջական և ներկայացուցչական ժողովրդավարության սկզբունքները համատեղվում և փոխլրացնում են միմյանց:** Անշուշտ, ժողովրդավարական պետությունում պետք է նախատեսված լինի առավել կարևոր, նշանակալի որոշումներն անմիջականորեն ժողովրդի կողմից կայացնելու իրավունքը (առաջին հերթին՝ հանրաքվեի միջոցով, այնպիսի հարցերի քննարկման ժամանակ, որոնք առնչվում են պետության ընդհանուր զարգացմանը և երկրի ամբողջ բնակչության շահերին): Միաժամանակ, պետական կյանքի ընթացիկ հարցերը կարող են լուծվել համընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի քվեարկությամբ ընտրված ներկայացուցչական մարմինների կողմից՝ օրինաստեղծ գործունեություն իրականացնելու ճանապարհով: Ըստ Օ. Բուլակովի՝ հենց ժողովրդական ներկայացուցչությունն է ընդունակ կյանքի կոչելու ժողովրդի կամքը պետական այս կամ այն հարցերը լուծելիս[11]:

Պառլամենտարիզմը որպես ներկայացուցչական ժողովրդավարության ձև՝ ընդհանուր հասկացություն է, որը քաղաքագիտական և իրավաբանական գրականության մեջ միանշանակ չի սահմանվում ու մեկնաբանվում: Գոյություն ունեն դրա բազմաթիվ սահմանումներ, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել չորս խմբի:

---

[9] Տե՛ս **Монтескье Ш.,** Избранные произведения, М., 1955, էջ 298:
[10] Տե՛ս նույն տեղում, էջ 167:
[11] Տե՛ս **Булаков О.Н.,** Парламентское право, М., 2004, էջ 35:

Գիտնականների առաջին խումբը պառլամենտարիզմը դիտարկում է որպես իշխանությունների բաժանման (տարանջատման) պայմաններում պետական իշխանության կազմակերպման համակարգ[12]: «Պառլամենտարիզմը պետական իշխանության կազմակերպման հատուկ համակարգ է, որը կառուցվածքային և գործառութային տեսանկյունից հիմնված է իշխանությունների բաժանման, օրենքի գերակայող սկզբունքների վրա՝ պառլամենտի գերակայության դերի պայմաններում, և ուղղված է սոցիալական արդարության իրավակարգի հաստատմանը և զարգացմանը»[13]:

Ըստ Ի. Ռիբկինի՝ պառլամենտարիզմը «...քաղաքական համակարգ է, որտեղ ժողովրդի ինքնիշխան կամքն իր մարմնավորումն է գտնում ընդհանուր և գաղտնի քվեարկության հիման վրա ընտրվող բարձրագույն ներկայացուցչական մարմնի մեջ, որն իրականացնում է օրենսդրական գործունեություն, գործադիր իշխանության մարմինների նկատմամբ վերահսկողություն և երաշխավորում է քաղաքացիների ինչպես մեծամասնության, այնպես էլ փոքրամասնության պաշտպանությունը»[14]:

Երկրորդ խմբի մասնագետները պառլամենտարիզմը տեսնում են սոսկ իշխանությունների բաժանման (տարանջատման) մեջ: «Պառլամենտարիզմ» հասկացությանը յուրահատուկ սահմանում են տվել Ի. Կոզլովը և Օ.Կուտաֆինը, որոնք այն դիտարկում են որպես «պետության կողմից հասարակության ղեկավարման հստակ համակարգ, որը բնութագրվում է օրենսդիր և գործադիր իշխանությունների տարանջատամբ, որտեղ պառլամենտն ունի քաղաքական և գաղափարախոսական էական դեր»[15]: Նրանք պնդում են, որ «...պառլամենտը և պառլամենտարիզմը փոխկապակցված հասկացություններ են, սակայն ոչ երբեք՝ նույնական: Պառլամենտարիզմը չի կարող գոյատևել առանց պառլամենտի: Միևնույն ժամանակ պառլամենտարիզմը չի կարող գոյություն ունենալ առանց պառլամենտարիզմի կարևորագույն տարրերի, որոնց թվին են պատկանում իշխանության բաժանումը ճյուղերի, ներկայացուցչությունը, օրինականությունը»[16]:

Երրորդ խմբի տեսակետն այն է, որ պառլամենտարիզմը գոյություն ունի միայն

---

[12] Տե՛ս Большой юридический энциклопедичесий словарь, М., 2004, էջ 425:

[13] Տե՛ս Парламентское право России. М., 1999, էջ 5:

[14]Տե՛ս **Рыбкин И.П.,** Становление и развитие парламентаризма в России. – Автореферат дисс. доктора политических наук. М., 1991, էջ 3: Տե՛ս նաև՝ **Онишко Н.,** Парламентаризм как конституционно-правовой институт. – «Журнал Российского права», 2003, № 4, էջ 35-43, **Пересыпкин А.,** Некоторые аспекты исследования конституционного правосознания. «Государство и право», 2005, № 1, էջ 92-97:

[15] Տե՛ս **Козлова Е. И., Кутафин О.,** Конституционное право России. М., 1995, էջ 337.

[16] Տե՛ս նույն տեղում:

պառլամենտի գերիշխող դերի պայմաններում: Այսպես, որոշ գիտնականների կարծիքով՝ պառլամենտարիզմը կառավարման ձև է, որտեղ օրենսդիր մարմինն ունի առավելություն պետական մյուս մարմինների նկատմամբ, իսկ իշխանությունները տարանջատված են: Այս առումով գիտական լուրջ հետևության է հանգել Մ. Բագլայը. «Պառլամենտարիզմը պետական կառավարման այնպիսի ձև է, որին հատուկ է պետական իշխանության բարձրագույն մարմինների համակարգում պառլամենտի գերիշխող դերը, վերջինիս վերահսկողությունը գործադիր իշխանության նկատմամբ, օրենսդիր և գործադիր աշխատանքի բաժանումը, պատգամավորների գերակա կարգավիճակը և ընտրողներից նրանց իրավաբանական անկախությունը»[17]:

Եվ վերջապես, **չորրորդ խմբի** տեսակետն արտահայտող Մ. Բիխարինի կարծիքով՝ ժամանակակից պառլամենտարիզմի հայեցակարգի հիմքում դրված է այն սկզբունքը, որ «...պառլամենտական իշխանությունը և պառլամենտարիզմը՝ որպես իշխանության յուրահատուկ կառուցվածք ու իշխանության համակարգ, կուսակցական համակարգի մաս են, որի պայմաններում պառլամենտում իշխանության համար կուսակցությունները պայքարում են իրար դեմ»[18]: Նկատենք, որ այս մոտեցումը պառլամենտարիզմի ավանդական հասկացությունից տարբերվում է նրանով, որ պառլամենտարիզմի ծանրության կենտրոնը տեղափոխվում է կուսակցական պայքարի ու պառլամենտում քաղաքական ուժերի ունեցած տեղերի հարթության վրա:

Իրավագետ Ս. Ավագյանը պառլամենտարիզմին տալիս է հետևյալ բնորոշումը. «Այն ներկայացուցչական մարմինների մշտական և հատուկ գործունեություն է»[19]:

Պառլամենտարիզմը դիտարկվում է և՛ լայն, և՛ նեղ իմաստով: Ըստ Ն.Ռաբոտյաժևի՝ լայն իմաստով պառլամենտարիզմը պետական իշխանության այն համակարգն է, որտեղ էական դերը պատկանում է ժողովրդավարական ներկայացուցչությանը: Նեղ իմաստով պառլամենտարիզմը դիտարկվում է որպես քաղաքական համակարգ՝ հիմնված իշխանությունների բաժանման սկզբունքի վրա, որտեղ գերիշխող դերը պատկանում է պառլամենտին՝ բարձրագույն ներկայացուցչական, օրենսդիր և վերահսկիչ մարմնին[20]:

Սահմանադրագետներից շատերի կարծիքով՝ միայն պառլամենտի գոյությունը պետության մեջ դեռևս չի նշանակում, որ այնտեղ կա պառլամենտարիզմ՝ որպես համա-

---

[17] Տե՛ս **Баглай М.В.,** Конституционное право РФ, М., 1998, էջ 424:
[18] Տե՛ս **Бихари М.,** Парламентаризм. Мир политики. Суждения и оценки западных политологов. М., 1992, էջ 43:
[19] Տե՛ս **Авакьян С.А.,** Конституция России: природа, эволюция, современность, М., 2000, էջ 21:
[20] Տե՛ս **Работяжев Н.В.,** Парламентаризм. – Политическая энциклопедия. М., 1999, էջ 112:

կարգ: Մենք համամիտ ենք Մ. Բագլայի հետ, ըստ որի՝ պառլամենտարիզմը գործուն է, դինամիկ և անընդհատ զարգացում է ապահովում, եթե պառլամենտին է պատկանում բարձրագույն օրենսդիր իշխանությունը, եթե նրան է տրված Կառավարության ղեկավարության կամ ամբողջ Կառավարությունը նշանակելու գործառույթը, եթե նա ունի վերահսկողական գործառույթ գործադիր իշխանության մարմինների նկատմամբ, կարող է պաշտոնանկ անել երկրի նախագահին, անվստահություն հայտնել Կառավարությանը, եթե իշխանության բաժանման սկզբունքն է գործում, պետական մարմինները ձևավորվում են ազատ ընտրական համակարգի միջոցով, երկրում իշխում է գաղափարախոսական բազմակարծությունն ու բազմակուսակցությունը, պատգամավորներն իրավաբանորեն անկախ են ընտրողներից, և պառլամենտին է վերապահված հատուկ ու էական դեր՝ որպես բարձրագույն օրենսդիր և ներկայացուցչական մարմին[21]:

Պառլամենտարիզմի հասկացությունը սահմանելիս ժողովրդավարական արժեքների առաջնայնությունը կարելի է տեսնել բազմաթիվ ժամանակակից հետազոտողների աշխատանքներում: Այսպես օրինակ՝ Ե. Խուբները պնդում է, որ պառլամենտարիզմի մասին կարելի է խոսել միայն ժողովրդավարական կառավարման տեսանկյունից[22]: Որոշ հեղինակներ ուղղակի հայտարարում են, որ պառլամենտարիզմը ոչ այլ ինչ է, քան «պատկերացումների մի համակարգ՝ պետականորեն կազմակերպված հասարակության համաժողովրդավարական, համաքաղաքակրթական արժեքների վերաբերյալ»[23]: Համակարծիք լինելով այն տեսակետին, որ պառլամենտարիզմի հիմքում ընկած են համաժողովրդավարական, համամարդկային սկզբունքներ (արժեքներ), **կցանկանայինք ընդգծել, որ պառլամենտարիզմն առաջին հերթին ժամանակակից աշխարհի բազմաթիվ պետությունների հասարակական-քաղաքական կյանքի կոնկրետ երևույթ է, այլ ոչ թե միայն պատկերացումների համակարգ:** Քաղաքական տեսության դիրքերից կարող ենք պառլամենտարիզմն իր հերթին սահմանել որպես ժողովրդական ներկայացուցչության ձև, որի հիմքում ընկած են համաժողովրդավարական, համամարդկային արժեքային համակարգերը, որոնք կոչված են ապահովելու քաղաքացիների անմիջական մասնակցությունը պե-

---

[21] Տե՛ս **Баглай М.В., Туманов М.В.,** Малая энциклопедия конституционного права. М., 1998, էջ 79; **Романов Р.М.,** Понятия и сущность парламентаризма. – «Социально-политический журнал», 1998, № 4; Парламентское право России, М., 1999, էջ 134: Российский парламентаризм, история и современность. М., 2000, էջ 47; **Beer S.H.** The British Legilature and Problem of mobility Concent. – Legilatures. Oxford, 1990 և այլն:

[22] Տե՛ս **Хюбнер Е.,** Парламентаризм и представительная система // Полис, 1992, № 3, էջ 40-44:

[23] Տե՛ս **Тихомиров Д.В.,** Становление и развитие российского парламентаризма (Исторический аспект): Автореферат дис. канд. ист. наук: 07.00.02 / Рос. экон. акад. М., 1997, էջ 9:

տական կյանքի կարևորագույն հարցերի լուծմանը:

Հարկ է նկատել, որ սահմանադրահիրավական գիտության մեջ չկա միասնական տեսակետ պառլամենտարիզմի բնույթի և էության վերաբերյալ: Համաձայնելով այն դիտարկմանը, որ դրա հիմքում ընկած են ժողովրդավարական արժեքներ՝ պետականագետները տարբեր կերպ են սահմանում պառլամենտարիզմի իրավական բնույթը: Տարածված տեսակետներից մեկի համաձայն՝ պառլամենտարիզմը կառավարման ձևի հատուկ տարատեսակ է. «Դա պետական իշխանության կազմակերպման մի այնպիսի ինստիտուցիոնալ-գործառութային ձև է, որի ժամանակ ժողովրդական ինքնիշխանության և, հետևաբար, նաև պետության ինքնիշխանության արտահայտողների դերում հանդես են գալիս ժողովրդական ներկայացուցչության բարձրագույն մարմինները, որոնք օրենքի ուժով ամրագրում են հասարակական զարգացման ընդհանուր շահերը և պահանջմունքները»[24]: Մեր կարծիքով, սակայն, կոռեկտ չէ պառլամենտարիզմի նույնացումը պետական կառավարման ձևի հետ, քանի որ դա ավելի բազմակողմանի հասկացություն է: Այն ներառում է կառավարման ամենատարբեր ձևերի (միապետությունների և հանրապետությունների) բազմաթիվ տարրեր, օժտված է ժողովրդավարական քաղաքական համակարգի որակներով և կարող է դրսևորվել տարբեր պետություններում՝ անկախ դրանցում պետական կառուցվածքի ձևից (ունիտա՞ր, թե՞ դաշնային):

Պառլամենտարիզմը սահմանելով պետական իշխանության կազմակերպման ձևի շրջանակներում՝ հանգում ենք «պառլամենտարիզմ» և «կառավարման պառլամենտական ձև» հասկացությունները սահմանազատելու անհրաժեշտությանը՝ համարելով, որ **դրանք նույնական հասկացություններ չեն:** Կառավարման պառլամենտական ձևը հարաբերվում է պառլամենտարիզմի հետ, ինչպես մասնավորն ընդհանուրի հետ: Ուստի, կարծում ենք, որ կառավարման պառլամենտական ձև կարելի է անվանել պետական իշխանության կազմակերպման այն համակարգը, որի ժամանակ ուղղակի, համընդհանուր, ազատ, հավասար և պարբերական ընտրությունների ճանապարհով ձևավորված ժողովրդական ներկայացուցչության մարմինը (պառլամենտը) պետական իշխանության բարձրագույն մարմինների միջև իշխանությունների բաժանման համակարգի շրջանակներում օժտված է կարևորագույն իրավունքներով ու իրավասություններով և բնութագրվում է կառավարության և պառլամենտի միջև փոխազդեցության բարձր աստիճանով:

---

[24] Տե՛ս **Бацев Ю.Н.,** Парламентаризм в России: теоретико-правовые и организационные аспекты. Автореферат дисс. канд. юр. наук. 12. 00. 02 / Рос. академия государственной службы при Президенте РФ. М., 1998, էջ 12:

Սահմանադրահիրավական գրականության մեջ «պառլամենտարիզմ» հասկացությունը մեկնաբանվում է տարբեր կերպ: «Ժամանակակից ուսումնասիրություններում անորոշություն գոյություն ունի «պառլամենտարիզմ» հասկացության բովանդակային բնութագրի վերաբերյալ: Պառլամենտարիզմը հաճախ մեկնաբանվում է չափազանց լայն իմաստով, - նշում է Ռ. Ալիմովը՝ նույնացնելով ներկայացուցչական ժողովրդավարության (ձևական հատկանիշով՝ պառլամենտի գոյության) հետ ընդհանրապես,- այն դեպքում, երբ պառլամենտարիզմը ներկայացուցչական ժողովրդավարության ձևերից մեկն է ընդամենը՝ նախագահական և կառավարման խառը ձևերին զուգահեռ»[25]:

«Ժամանակակից պառլամենտարիզմը հասարակության սոցիալ-քաղաքական և պետահիրավական բարդ երևույթ է, - փաստում է Գ. Մախաչևը, - չնայած այն բանին, որ վերջին տարիներին բազմաթիվ պետական, քաղաքական և հասարակական գործիչներ, իրավագետներ, քաղաքագետներ, հրապարակախոսներ հաճախ են օգտագործում «պառլամենտարիզմ» հասկացությունը, դեռ մինչև օրս էլ դրա բովանդակային բնութագրի վերաբերյալ անորոշություն գոյություն ունի»[26]:

Ռուս հայտնի իրավաբան Պ.Գ. Միժուևը 20-րդ դարի սկզբին պառլամենտարիզմը սահմանում էր որպես «պետական կառավարման այնպիսի կազմակերպում կամ ավելի ստույգ՝ այնպիսի հարաբերություններ օրենսդիր ժողովի և գործադիր իշխանության միջև, որոնցում պառլամենտի դերը գերիշխող է»[27]: Նման դիրքորոշում ունեն նաև ժամանակակից հետազոտողներից շատերը: «Պառլամենտարիզմը,- կարդում ենք իրավաբանական հանրագիտարաններից մեկում,- գերագույն պետական իշխանության կազմակերպման և գործունեության համակարգ է, որը բնութագրվում է օրենսդիր և գործադիր գործառույթների տարանջատմամբ, պառլամենտի արտոնյալ դիրքով»[28]:

«Պառլամենտարիզմը, - ընդգծում են Իրավաբանական մեծ բառարանի հեղինակները,- կառավարման այնպիսի համակարգ է, որը բնութագրվում է օրենսդիր և գործադիր գործառույթների հստակ տարանջատմամբ, պետական իշխանության մնացած մարմինների նկատմամբ ներկայացուցչական օրենսդիր մարմնի՝ պառլամենտի ձևական գերա-

---

[25] Տե՛ս **Алимов Р.,** Парламентаризм: опыт зарубежных стран, т. 2, Ташкент, 2002, էջ 36:

[26] Տե՛ս **Махачев Г.,** Необходимость и условия формирования парламентаризма // Право и жизнь, 2000, № 31, էջ 24:

[27] Տե՛ս **Мижуев П.,** Парламентаризм м представительная форма правления в главных странах современной Европы, СПб., 1906, էջ 6:

[28] Տե՛ս Юридическая энциклопедия, М., 2002, էջ 365:

կայությամբ»[29]:

«Պառլամենտարիզմը գերագույն պետական իշխանության կազմակերպման և գործունեության համակարգ է, - ընդհանրացնում է Ռ.Ալիմովը,- որը բնութագրվում է օրենսդիր և գործադիր գործառույթների տարանջատմամբ, պառլամենտի արտոնյալ դիրքով: Պառլամենտարիզմի ժամանակ կառավարությունը ձևավորվում է պառլամենտի կողմից՝ պառլամենտում մեծամասնություն ունեցող կուսակցության անդամների թվից և պատասխանատու է նրանց առաջ»[30]:

«Պառլամենտարիզմը ներկայացուցչական ժողովրդավարության և պետական իշխանության կազմակերպման ձև է, - ըստ Ու.Ֆ. Ալմանի, - որի ժամանակ պառլամենտն առաջատար դեր է խաղում քաղաքական համակարգում»[31]:

Պառլամենտարիզմի հասկացության շուրջ գոյություն ունեն նաև այլ տեսակետներ: «Պառլամենտարիզմի իրավական տեսության մեջ, - նշում է Կ. Սոկոլովը,- պառլամենտական պետությունը կարող է սահմանվել որպես ներկայացուցչական պետություն, որի ղեկավարն իր ներկայացուցչական առանձնաշնորհներն իրականացնելիս կապված է սահմանադրաիրավական այնպիսի նորմով, որը պահանջում է կառավարության քաղաքականության մշտական համապատասխանեցումը պառլամենտի մեծամասնության ցանկություններին»[32]:

«Պառլամենտարիզմը,- Լ. Վեգերի կարծիքով,- հասարակության զարգացման գործընթացում հետադարձ կապի կառուցակարգ է, միջնորդավորված ժողովրդավարության ձև, որի դեպքում ժողովրդի կամքի արտահայտումն իրականացվում է միջանկյալ օղակի՝ պատգամավորական կորպուսի միջոցով»[33]:

Ըստ Ա.Դենիսովի՝ «պառլամենտական, այդ բառի բուն իմաստով, կարող են կոչվել միայն այն պետությունները, որոնցում պառլամենտարիզմի նորմերը ձևավորում են դրանց սահմանադրական իրավունքի բաղկացուցիչ մասը, մնացած բոլոր ներկայացուցչական պետությունները, որքան էլ որ դրանցում ուժեղ լինեն պառլամենտարիզմի միտումները, պետք է դասվեն ոչ պառլամենտական տեսակին»[34]:

---

[29] Տե՛ս Большой юридический словарь, М., 1999, էջ 473:
[30] Տե՛ս **Алимов Р.** նշվ. աշխ., էջ 37:
[31] Տե՛ս **Алеман У. фон.** Парламентаризм // Политология. 1993, № 3, էջ 18:
[32] Տե՛ս **Соколов К.,** Парламентаризм. Опыт правовой теории парламентарного строя. СПб., 1912, էջ 400:
[33] Տե՛ս **Вегер Л.,** Закат парламентаризма, lib.helios-tv.ru. 2003.
[34] Տե՛ս **Денисов А.,** Сущность и формы государства, М., 1960, էջ 18:

Դ. Լինցի կարծիքով՝ «պառլամենտարիզմը բազմաշերտ երևույթ է, որն անխուսափելիորեն ներկայանում է բազմաթիվ գումարելիների փոխադարձ կապերում՝ մի կողմից դա պետական կառավարման մեջ ներկայացուցչական սկզբունքն է, մյուս կողմից՝ հասարակական կյանքի կազմակերպման սկզբունքը, քաղաքացիների իրավունքների, պարտականությունների և ազատությունների ձեռք բերված մակարդակը: Ուստի պառլամենտարիզմը կարելի է սահմանել որպես հասարակության առաջատար սոցիալական շերտերի շահերի (որոնք հռչակվում են որպես համազգային շահ) իրականացման ինքնուրույն ժողովրդավարական մեխանիզմ»[35]: «Պառլամենտը և պառլամենտարիզմը փոխկապակցված և փոխպայմանավորված հասկացություններ են, սակայն բոլորովին էլ ոչ նույնական: Պառլամենտարիզմը չի կարող գոյություն ունենալ առանց պառլամենտի, այն պառլամենտի բարձրագույն որակն է: Պառլամենտը կարող է գոյություն ունենալ առանց պառլամենտարիզմի էական տարրերի, ինչը բնորոշ է ավտորիտար ռեժիմներին»[36],- շարունակում է այս հեղինակը:

Նկատենք, որ իրավաբանական գրականության մեջ որպես պառլամենտարիզմի որոշիչ առանձնահատկություն առավել հաճախ անվանվում են դրա գերակայությունը և առաջնային դերը պետական իշխանության մարմինների համակարգում: Մենք ոչ ամբողջությամբ ենք համակարծիք նման տեսակետին նույնիսկ այն դեպքերում, երբ խոսքը «պառլամենտի ձևական գերակայության» մասին է: Իրոք, որոշ առավել նշանակալի իրավասություններ իրականացնելիս պառլամենտի դիրքորոշումը կարող է ունենալ վճռորոշ նշանակություն: Սակայն, նկատենք նաև, որ բարձրագույն պետական իշխանության մյուս մարմինները նույնպես օժտված են իրավասություններով, որոնք իրացնելիս արդեն դրանք են օգտվում առաջնայնության իրավունքից: Այլ խոսքով՝ պառլամենտարիզմի պայմաններում հատուկ կարևորություն է ձեռք բերում իշխանական իրավասությունների հավասարակշռումը, երբ բարձրագույն պետական իշխանության մարմիններից ոչ մեկը հնարավորություն չունի այն միանձնյա իրականացնելու: **Հետևաբար՝ պառլամենտարիզմի առանձնահատկություններից մեկը տարբեր իշխանական (օրենսդիր և գործադիր) մարմինների միջև պետության կառավարման ոլորտում համատեղ ռազմավարության մշակման անհրաժեշտությունն է**: Այսինքն՝ կարելի է խոսել պառլամենտարիզմի օրոք

---

[35] Տե՛ս **Линц Д.К.,** Парламентарные системы правления // Информационно - аналитический бюллетень. 2000, № 7, էջ 19:

[36] Նույն տեղում, էջ 33:

իշխանության տարբեր ճյուղերի փոխհարաբերությունների «փոխզիջումային էության» մասին: Պառլամենտական համակարգը ենթադրում է, որ որպես գերակայություն պետք է ճանաչվի բացառապես և միայն ժողովրդի իշխանությունը, քանի որ ժողովուրդն այս դեպքում կհանդիսանա պետական իշխանության սկզբնաղբյուրը, իսկ պետական մարմինների իշխանությունն արդեն ածանցյալ է ժողովրդի իշխանությունից: Որպես ասվածի հաստատում՝ Մ. Բիխարին նշում է. «**Իշխանությունը պատկանում է ոչ թե պառլամենտին, այլ ժողովրդին, պառլամենտական իշխանությունն այս դեպքում ընդամենը լիազորված իշխանություն է, քանի որ ինքնիշխան է միայն ժողովուրդը, իսկ պառլամենտը լոկ մարմնավորում է այդ ինքնիշխանությունը՝ որևէ փոփոխություն չմտցնելով ինքնիշխանության իրավունքների օբյեկտում»**[37]**:** Նման մոտեցումը, մեր կարծիքով, ճիշտ է նաև բարձրագույն պետական իշխանության մյուս մարմինների համար**:**

Ամփոփելով շարադրվածը՝ մենք առաջարկում ենք հետևյալ բնորոշումը. «***Պառլամենտարիզմը պետական իշխանության ոլորտում այնպիսի հարաբերությունների համակարգ է, որն իրականացվում է քաղաքական-իրավական մշակույթի բարձր աստիճան ունեցող ժողովրդավարական հասարակության պայմաններում և որի հիմքում ժողովրդական ներկայացուցչությունը՝ որպես պետական ինքնիշխանության արտահայտիչ, պետական կառավարման համակարգում զբաղեցնում է առաջատար տեղերից մեկը և պետական այլ ինստիտուտների հետ միասին պետության քաղաքականության մշակման գործընթացի վրա վճռորոշ ազդեցություն ունի իշխանությունների բաժանման (տարանջատման) համակարգում»:***

Ժամանակակից պայմաններում կարելի է առանձնացնել ընդհանուր կանոններ, հատկանիշներ, որոնցով, մեր կարծիքով, հնարավոր կլինի պարզել ոչ միայն պետության պառլամենտական բնույթը, այլև բացահայտել այնպիսի բարդ ու հակասական երևույթի էությունը, ինչպիսին պառլամենտարիզմն է՝ իր առանձնահատկություններով: Ըստ մեզ՝ տեղին է առանձնացնել ժամանակակից պառլամենտարիզմին բնորոշ հետևյալ հատկանիշները.

. ներկայացուցչական հաստատության (պառլամենտի) առկայությունը,

. ազատ, համընդհանուր, հավասար ընտրությունները՝ որպես ներկայացուցչական հաստատության ձևավորման եղանակ,

---

[37] Տե՛ս **Бихари М.,** նշվ աշխ., էջ 42:

. օրենքի գերակայությունը,

. իշխանությունների բաժանման (տարանջատման) սկզբունքը՝ «զսպումների և -հակակշիռների» արդյունավետ աշխատող համակարգով,

. կառավարության քաղաքականության և պառլամենտի քաղաքական առաջնահերթությունների պարտադիր համաձայնեցումը,

. պատգամավորների ազատ մանդատը:

Պառլամենտարիզմի կարևոր հատկանիշը կառավարության քաղաքականության և պառլամենտի քաղաքական առաջնահերթությունների պարտադիր համաձայնեցումն է, ինչը նշանակում է, որ պառլամենտական կառավարման օրոք բացառվում է պառլամենտի վստահությունից զրկված կառավարության գոյությունը: Ճիշտ չի լինի կարծել, թե կառավարությունը տվյալ դեպքում կորցնում է իր ինքնուրույնությունը և վերածվում է պառլամենտից կախվածության մեջ գտնվող պետական մարմնի: Պառլամենտական մեծամասնության աջակցությունը վայելող կառավարության քաղաքականությունն առաջին հերթին մշակվում է հենց նախարարների կողմից, և պառլամենտական մեծամասնության պահանջները կատարելիս գործադիր իշխանությունը հնարավորություն է ստանում, հանգամանքներից կախված, իր շտկումները մտցնելու (առաջարկելու պետության զարգացման սեփական ռազմավարությունը)՝ պառլամենտական մեծամասնությանը համոզելով դրա ճշմարտացիության մեջ[38]:

3.Տե՛ս **Ковалевский М. М.,** Что такое парламент, СПб., 1906, էջ 65:

ПРОИСХОЖДЕНИЕ, ПОНЯТИЕ И СУЩНОСТЬ ПАРЛАМЕНТАРИЗМА

Мартин Манукян

преподаватель кафедры юридического факультета Ереванского университета «Гладзор»

член Палаты адвокатов РА, адвокат, кандидат юридических наук

Тел.: 098 51-01-63 моб.

Аннотация. Актуальность статьи обусловлена преобладанием парламентской формы правления в условиях представительной демократии и необходимостью поиска наиболее эффективных структур организации деятельности высших органов государственной власти. Сравнивая различные теории и трактовки в политической науке и юридической литературе о происхождении, сущности и понятии парламентаризма, давая собственнную характеристику определению парламентаризма, подчеркивая, что основополагающий принцип принадлежности власти только народу заключается в конституционности и правовой основе парламентаризма, автор статьи справедливо заметил, что история зарождения и развития парламентаризма была негладкой. И как учение (доктрина), и как институт оно не пережило много кризисов. Отмечая, что его современное состояние не является идеальным даже в тех странах, которые по праву считают себя колыбелью парламентаризма, автор статьи, помимо выделения характеристик, характерных для современного парламентаризма, пришел также к важному выводу, что основной характеристикой парламентаризма является парламентаризм - обязательное согласование политики правительства и политических приоритетов парламента, что означает, что в период парламентского правления исключается существование правительства, лишенного доверия парламента.

Комплексный анализ затронутых в статье вопросов может быть полезен в контексте готовящихся в Республике Армения конституционных изменений.

Ключевые слова: парламент, парламентаризм, правительство, верховенство закона, народная власть, высшие органы государственной власти, парламентское управление, разделение властей, конституционные изменения.

ORIGIN, CONCEPT AND ESSENCE OF PARLIAMENTARISM

Martin Manukyan

Professor of the Department of Law of the Faculty of Law, Yerevan University "Gladzor"

Member of the RA Chamber of Lawyers, lawyer, candidate of legal sciences

Phone: 098 51-01-63 /mobile/

Summary: The relevance of the article is due to the predominance of the parliamentary form of government in representative democracy and the need to find the most effective structures for organizing the activities of the highest bodies of state power. Comparing various theories and interpretations in political science and legal literature about the origin, essence and concept of parliamentarism, giving his own characteristics to the definition of parliamentarism, emphasizing that the fundamental principle of power belonging only to the people lies in the constitutionality and legal basis of parliamentarism, the author of the article rightly noted that the history of the origin and the development of parliamentarism was not smooth. Both as a teaching (doctrine) and as an institution, it has not survived many crises. Noting that its modern state is not ideal even in those countries that rightly consider themselves the cradle of parliamentarism, the author of the article, in addition to highlighting the features characteristic of modern parliamentarism, also came to the important conclusion that the main feature of parliamentarism is the coordination of government policy and political priorities of the parliament. which means that under parliamentary rule, the existence of a government deprived of the confidence of the parliament is excluded.

A comprehensive analysis of the issues raised in the article may be useful in the context of the constitutional changes being prepared in the Republic of Armenia.

Key words: parliament, parliamentarism, government, rule of law, people's power, supreme bodies of state power, parliamentary governance, separation of powers, constitutional changes.

Հոդվածը գրախոսվել է՝ 07.05.2024թ.
Ներկայացվել է տպագրության՝ 28.05.2024թ.